

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԲԱԶԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Ծրագրի անվանումը **Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոնի պահպանում և զարգացում**

2. Գիտական և գիտատեխնիկական գործունեության

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագիր

V

«Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում» ծրագիր

3. Ծրագրի իրականացման համար տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր.

N 10-15/I-12, «15»02.2019թ.

4. Հաշվետու ժամանակահատվածը. **2020թ. հունվար - դեկտեմբեր**

5. Կազմակերպության անվանումը **Հայաստանի ազգային ագրարային համալսարան**

6. Կազմակերպության ղեկավարի

ազգանունը, անունը, հայրանունը **Ուռուտյան Վարդան Էդիկի**

հեռախոսը **(+37412) 43-03-43**

Էլեկտրոնային փոստը **h.tspnetsyan@anau.am**

7. Ծրագրի գիտական ղեկավարի

ազգանունը, անունը, հայրանունը **Ոսկանյան Աշոտ Երջանիկի**

հեռախոսը **091 21 54 57.**

Էլեկտրոնային փոստը **ashot.voskan@gmail.com**

8. Հաշվետու ժամանակահատվածում

գիտական հրապարակումների ընդհանուր քանակը 5 / 1
(ՀՀ) (օտարերկրյա)

գիտաժողովներին ներկայացված զեկույցների ընդհանուր քանակը 0 / 1
(ՀՀ) (օտարերկրյա)

9. Ծրագրի իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցները **5477.8**
հազար ՀՀ դրամ

10. Ծրագրի գիտական ղեկավարի ստորագրությունը _____

11. Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը _____

« ___ » _____ 20.. թ.

Կ. Տ.

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

«ՀՀ գյուղատնտեսության զարգացման կլաստերային քաղաքականության առաջադրումը և դրա կիրառման նախադրյալները» ծրագիրն իրականացվել է հաստատված առաջադրանքին և օրացուցային պլանին համապատասխան:

Հաշվետվությունում ներկայացվում է 2020թ. իրականացված հետազոտական աշխատանքների ամփոփումը:

ՀՀ գյուղատնտեսությունում ծառացած խնդիրների լուծումները փոխապայմանավորվածության մեջ են տարածաշրջանների զարգացման կազմակերպատնտեսական և սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունների, ագրարային ներուժի ու կապիտալի կենտրոնացման, կրթական, գիտական, խորհրդատվական կառույցների կոոպերացման և ինտեգրման հետ:

Կորոնավիրուսային համավարակի և ռազմական դրությամբ պայմանավորված իրավիճակներում ակնհայտ է, որ միայն շուկայական մեխանիզմներով անհնարին է դառնում տնտեսությունում ապահովել հավասարակշռություն ու կայունություն, քանի որ ի հայտ են գալիս խաթարումներ, թե տնտեսական, թե սոցիալական կյանքում, այդ թվում պարենամթերքի առաջարկի և պահանջարկի միջև: Հետևաբար առանձնակի է ընդգծվում գյուղատնտեսության կենսական նշանակությունը: Առաջ են գալիս մարտահրավերների նոր մակարդակներ, առանձին տարածաշրջաններում, այդ թվում սահմանային, գյուղատնտեսության և մյուս ոլորտների փոխկապակցված գործունեության ապահովման աշխատանքների և միջոցառումների, նոր բնույթի համակարգվածությամբ կազմակերպման անհրաժեշտություն: ՀՀ ագրոպարենային համակարգի օղակների վարքագծային փոփոխությունները և սպասվելիք բացասական դրսևորումները կարող են մեղմվել, եթե կիրառության մեջ է դրվում ձեռնարկատիրական միջավայրի կարգավորման ու կառավարման գործուն ձևեր:

Հաշվի առնելով քաղաքական և տնտեսական բավականին բարդ պայմանները, որում հայտնվել է Հայաստանի Հանրապետությունը, ինչպես նաև տնտեսության զարգացման համաշխարհային փորձը, այդ թվում ագրոպարենային

արտադրության, կարող ենք պնդել կլաստերային քաղաքականության, մոտեցումների կիրառման անհրաժեշտության և զարգացման իրատեսական հնարավորությունների մասին: Միաժամանակ կլաստերիզացիան կարող է հանդիսանալ պարենային գործող արժեշղթաներում տնտեսավարող սուբյեկտների արդյունավետ փոխհամագործակցության ձևերից մեկը:

1. Կլաստերը (անգլերեն **cluster**-կուտակում,փունջ) մի քանի միասեռ տարրերի միավորում է, որը կարելի է դիտարկել որպես որոշակի հատկություններով ինքնուրույն միավոր¹:

Կլաստեր հասկացության, ընկերությունների զարգացման ռազմավարության, մրցակցության և մրցունակության հարցերը իր աշխատություններում մանրամասն ուսումնասիրել է ամերիկացի գիտնական Մայքլ Պորտերը²: Ըստ Մ. Պորտերի **«Կլաստերը դա փոխկապակցված կազմակերպությունների և հաստատությունների տեղաբաշխումն է մեկ աշխարհագրական վայրում, առանձին տարածաշրջանի կտրվածքով»**³: Բացի դրանից, շատ կլաստերներ ընդգրկում են կառավարման մարմիններ և այլ հաստատություններ, ինչպիսիք են՝ համալսարանները, ստանդարտացման կենտրոնները, առևտրային ասոցիացիաները, որոնք իրականացնում են մասնագիտացված վերապատրաստում, տեխնիկական աջակցություն, տրամադրում են անհրաժեշտ տեղեկատվություն և այլն:

Տարածաշրջանային կլաստերի հայեցակարգային մոտեցումներում մեծ ավանդ ունի ամերիկացի տնտեսագետ Մայքլ Էնրայտը: Ըստ նրա **«Տարածաշրջանային կլաստերը՝ արդյունաբերական կլաստեր է, որում ընդգրկված անդամ ընկերությունները աշխարհագրորեն մոտ են միմյանց»**⁴ : Հետագայում հատուկ շեշտադրեց, որ տարածաշրջանային կլաստերը տնտեսության

¹ Карта слов и выражений русского языка www.kartaslov.ru

² Конкуренция.: Пер. с англ.-М.: Издательский дом «Вильямс», 2005.- 608с.: ил.- Парал.тит.англ.

³ Асаул А. Н. Организация предпринимательской деятельности: Санкт-Петербург, 2005.- с.110

⁴ Enright M J. Why Clusters are the Way to Win the Game? // Word Link, No: 5, July/August, 1992. – pp. 24-25.

մեկ կամ մի քանի հարակից ոլորտներում գործող ընկերությունների աշխարհագրական ագլոմերացիա (համախումբ) է:⁵

Կլաստերների ամենավաղ հետազոտություններ տեղ են գտել նաև Ալֆրեդ Մարշալի «Տնտեսագիտության սկզբունքներ» գրքում, որտեղ նա հետազոտել է Մեծ Բրիտանիայի արդյունաբերական շրջանները: Իր հետազոտության մեջ նա օգտագործել է եզրույթներ «արդյունաբերական գոտու» կամ «տեղայնացված արդյունաբերության» համար, մինչդեռ դրանց նկարագրությունից հետևում է, որ նա ի նկատի է ունեցել կլաստերը՝ բավականին խորը աշխատանքի միջֆիրմային բաժանմամբ: Որպես օրինակ Մարշալը մեջբերում է բամբակի արտադրությունը Մեծ Բրիտանիայի Լանկաշիրի դքսությունում և սպասքի պարագաների առևտուրը Շեֆիլդում⁶:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ կլաստերների մրցակցության բարձրացման գործում էական նշանակություն ունի օգտագործվող ռեսուրսների որակը: Տարբերում են ռեսուրսների յոթ հիմնական խումբ, որոնց առկայությունը նպաստում է արդյունավետ տեխնոլոգիական կլաստերի ստեղծմանը՝

1. Բնական ռեսուրսներ,
2. Նյութատեխնիկական և արտադրական ենթակառուցվածք,
3. Աշխատանքային ռեսուրսներ,
4. Ֆինանսական ռեսուրսներ,
5. Գիտատեխնոլոգիական ենթակառուցվածք,
6. Տեղեկատվական ենթակառուցվածք,
7. Վարչարարական ենթակառուցվածք:

Ագրարային ոլորտում կլաստերային մոտեցումներ և արդյունավետ քաղաքականություն իրականացնում են ԱՄՆ, Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան, Դանիան, Բելգիան, Ֆինլանդիան, Նիդերլանդները, Հունգարիան, Բուլղարիան և այլն:

ԱՄՆ-ում գործում են տարաբնույթ ագրոարդյունաբերական կլաստերներ, որոնցից ամենախոշորները կենտրոնացված են Վաշինգտոնի, Օկլահոմայի,

⁵ Enright M. J. Survey on the Characterization of Regional Clusters: Initial Results. Working Paper // Institute of Economic Policy and Business Strategy: Competitiveness Program University of Hong Kong. 2000. p. 2, /21 p/

⁶ Третьяк В.П., Кластеры предприятий, 2011г. с.33

Լուիզիանայի նահանգներում և այլն: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացվում Կալիֆորնիայի գինեգործական կլաստերը, որը ընդգրկում է մոտ 680 առևտրային կազմակերպություններ, գինու գործարաններ, գյուղացիական տնտեսություններ, կրթական և գիտահետազոտական և այլ կազմակերպություններ: Կալիֆորնիայի գինեգործական կլաստերի ձեռնարկությունները փոխկապակցված են և աշխարհագրականորեն կենտրոնացված են մեկ տարածաշրջանում: Կլաստերի այս մոդելը տարբերվում է մյուսներից նաև նրանով, որ մոդելի կենտրոնում ինչպես խաղողագործությամբ զբաղվող ֆերմերային տնտեսություններն են, այնպես էլ գինու գործարանները⁷:

Իտալիայի տնտեսությանը բնորոշ է փոքր և միջին ձեռնարկությունների գերակշռությունն արտադրական համակարգում: Դրանք միավորվում են տարբեր ասոցիացիաներում և իրականացնում են այնպիսի գործունեություն, որոնք լրացնում են միմյանց տարբեր արտադրական փուլերի ընթացքում: Իտալական մոդելը հիմնականում կարող են կիրառել այն երկրները, որոնք ունեն տեխնոլոգիական առումով ոչ բարձր մակարդակ⁸:

Ֆրանսիայում կլաստերներին անվանում են նաև «մրցունակության բևեռներ» (Pôles de compétitivité), որոնք իրենցից ներկայացնում են խոշոր գիտաարտադրական համալիրներ, համախմբում են տնտեսության տարբեր ոլորտներում գիտական և գիտահետազոտական ինստիտուտների, կրթական հաստատությունների և բարձր տեխնոլոգիական ձեռնարկությունների գործունեությունը: Այս տիպի կլաստերներն իրավաբանական անձինք են: Գործնականում դրանք հանդիսանում են կամ ասոցիացիաներ, կամ ձևավորվում են ընկերակցությունների իրավաբանական միավորումների ձևով: Ֆրանսիայում գործում են 71 մրցունակության բևեռներ, որոնցից 11-ը՝ ագրարային ուղղվածության

⁷ Аширбекова Л.Ж., Абенев К./ Международный опыт развития кластеров на региональном, национальном и международном уровнях/ Международный экономический форум 2013 <http://be5.biz/ekonomika1/r2013/2963.htm>

⁸ О. Л. Ксенофонтова// Опыт зарубежных стран по созданию и функционированию кластеров: модельный подход// «Современные наукоемкие технологии. Региональное приложение» N2 (42) 2015 <https://cyberleninka.ru/article/n/opyt-zarubezhnyh-stran-po-sozdaniyu-i-funktsionirovaniyu-klasterov-modelnyy-podhod/viewer>

են, մասնակիցներին կառավարությունը ցուցաբերում է ֆինանսական աջակցություն⁹:

Եվրամիության երկրներում կլաստերների աջակցության ծրագրերը իրականացվում են տարածքային, գիտության և տեխնոլոգիաների զարգացման, ինչպես նաև արդյունաբերական քաղաքականությունների իրականացման շրջանակներում: Այսպիսի ծրագրերի նախաձեռնումը խոսում է այն մասին, որ կլաստերները ԵՄ-ում հանդիսանում են տարածքային, գիտական և արդյունաբերական զարգացման հիմնական գերակայություններից մեկը: ԵՄ-ում կլաստերների 1/3-ի նախաձեռնողը հանդիսանում է պետությունը (ֆինանսավորում է կլաստերային նախաձեռնությունների 54%-ը), 27%-ը՝ մասնավոր հատվածը (ֆինանսավորման 18%-ը), իսկ 35%-ի դեպքերում կլաստերները ստեղծվում են պետության և գործարար ոլորտի համատեղ նախաձեռնության արդյունքում (ֆինանսավորման 35%-ը)¹⁰:

Գերմանիայում հիմնականում գործում են 3 տիպի՝ բարձր տեխնոլոգիաների, արտադրական և նանոտեխնոլոգիաների կլաստերներ, այսինքն՝ միավորվում են ինովացիոն տեխնոլոգիաներով արտադրության կազմակերպելու համար: Կլաստերները բաղկացած են 4 բլոկից՝ արտադրություն, արդյունաբերություն, գիտություն, շուկա: Գերմանիայում ներկայումս գործում են 11 տարածաշրջանային կլաստերներ¹¹:

Կլաստերային նախաձեռնության (cluster initiative) զարգացման վառ օրինակ է Ավստրիան: Կլաստերային նախաձեռնությունը հատկապես լայնորեն կիրառվել է Վերին Ավստրիայում, որտեղ կլաստեր տերմինը արդյունավետ օգտագործվել է որպես բրենդ, տարածաշրջանի վարկանիշի բարձրացման և օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման նպատակով:

Կլաստերների աջակցության նպատակային ծրագրեր իրականացվում են տարբեր մակարդակներում՝ տարածաշրջանային, ազգային և ոլորտային: Կլաստերները

⁹ <https://andshestopalov.livejournal.com/13757.html>

¹⁰ OECD, Competitive Regional Clusters: National Policy Approaches, 2007 URL: <http://www.oecd.org/cfe/regional-policy/competitiveregionalclustersnationalpolicyapproaches.htm>

¹¹ А. Акопян// Роль кластеров в развитии современных национальных инновационных систем субъектов мирового хозяйства// Диссертация// М.- 2016. С. 77-78
https://guu.ru/files/dissertations/2016/06/akopyan_a_r/dissertation.pdf

ներառում են ավստրիական տնտեսության 8 ոլորտների կազմակերպություններ՝ ավտոմոբիլային և պահեստամասեր, ավտոմոբիլային ագրեգատներ, կահույք և փայտամշակում, բժշկական տեխնոլոգիա, վերականգնվող էներգիա, պարենային կլաստեր և այլ ոլորտներ: 2019 թվականին կլաստերներում ընդգրկված են 2230 գործընկեր կազմակերպություններ, իրականացվում են 67 համագործակցության ծրագրեր, 135 նորարական ծրագրեր:¹²

ՌԴ-ում կլաստերները ձևավորվում են 3 հիմնական ձևերով՝

- ա/ սովետական և հետսովետական բարձր տեխնոլոգիաների ճյուղերում (ավիատիեզերական, մեքենաշինական, նավաշինական, նավթաքիմիական և այլն),
- բ/ գիտահետազոտական,
- գ/ ՓՄՁ ինովացիան միջոցով:

ՌԴ-ում կլաստերները ֆինանսավորվում են պետական միջոցներով և ղեկավարվում են Կլաստերի զարգացման կենտրոնի կողմից:

Ղազախստանում գործում են 6 մասնագիտացված տարածաշրջանային-ոլորտային և 1 ազգային կլաստերներ: Ազգային կլաստերը դիվերսիֆիկացնում է հարավային տարածաշրջանի տնտեսությունը: Պետք է նշել, որ այստեղ կլաստերները ունեն ռազմավարական նշանակություն և ծառայում են առանձին տարածաշրջանների զարգացմանը¹³:

Հացահատիկի արտադրության կլաստերի զարգացման ծրագրեր իրականացվում են Կանադայում, Ռուսաստանի Դաշնությունում, Ղազախստանում և այլ երկրներում: Կանադայի ցորենի ազգային կլաստերը իրականացնում է հետազոտական նախագծեր, որոնք ներկայացված են տարբեր հետազոտական հաստատությունների՝ համալսարանների, Գյուղատնտեսության և սննդի հետազոտական կենտրոնների կողմից՝ ուղղված են ֆերմերային տնտեսությունների եկամտաբերության մակարդակի բարձրացմանը, բերքատվության բարձրացմանը, ցրտադիմացկուն սորտերի և նոր սորտերի մշակմանը, որոնք կունենան ավելի բարձր դիմադրողականություն հիվանդությունների և վնասատուների նկատմամբ:

¹² Clusterland upper Austria <http://www.clusterland.at>

¹³ А. Шустов// Кластеры в ЕАЭС: новый двигатель интеграции// Евразия эксперт, 2019 <https://eurasia.expert/klastery-v-eaes-novyy-dvigatel-integratsii/>

Յորենի կլաստերի զարգացման ծրագիրը նախատեսված է 2018-2023 թթ. համար, նախագծերի ֆինանսավորումը կազմում է 25 մլն. դոլար:¹⁴

Ռուսաստանի Դաշնությունում հացահատիկային կլաստերի զարգացման ծրագրի նպատակն է. կլաստերի մասնակիցների՝ ֆերմերային տնտեսությունների և վերամշակող կազմակերպությունների արտադրատնտեսական գործունեության արդյունավետության բարձրացումը, իրացման ծավալների և աշխարհագրության ընդլայնումը:¹⁵ Ծրագրի հիմնական խնդիրներն են. կլաստերի մասնակիցների մրցունակության բարձրացումը, ի շնորհիվ արդյունավետ համագործակցության, համատեղ նախագծերի իրականացումը, փոքր և միջին ինովացիոն կազմակերպություններին աջակցության տրամադրումը, արտադրական և տեխնոլոգիական ենթակառուցվածքի զարգացումը, նոր աշխատատեղերի ստեղծումը և այն:

Միջազգային փորձը վկայում է, որ վերջին երկու տասնամյակում կլաստերների ձևավորման գործընթացը տեղի է ունենում բավականին ակտիվ կերպով: Համաձայն փորձագիտական գնահատականների, ներկայումս կլաստերիզացիան ընդգրկում է առաջատար երկրների տնտեսությունների 50 տոկոսը: ԱՄՆ-ում կլաստերների քանակը հասնում է 380, որոնցում ընդգրկված են կազմակերպությունների կեսից ավելին և ապահովվում են ՀՆԱ-ի 60 տոկոսից ավելին: Եվրամիության երկրներում կլաստերներում զբաղված են աշխատուժի 38 տոկոսը:¹⁶

Ըստ մեզ ՀՀ պայմաններում կլաստերը կարելի է դիտարկել ագրարային ոլորտում մրցունակության բարձրացման գործիք, ֆիզիկական և իրավաբանական անձանց տնտեսական, նպատակային գործունեության ձև, որոնք միավորվում են որոշակի վարչատարածքային միավորի շրջանակում, մրցակցային առավելությունների միասնական իրացման նպատակով:

¹⁴ Կանադայի ցորենի ազգային կլաստերի պաշտոնական կայքէջ <https://www.wheatresearch.ca/wheat-cluster>

¹⁵ Программа развития Первого зернового кластера производителей сельскохозяйственной и промышленной продукции, утверждена постановлением Правительства Новосибирской области от 24.12.2019 № 496-п,

¹⁶ Инновационно-технологические кластеры стран – членов международного центра научной и технической информации 2013 г. , - стр 19 [Инновационно-технологические кластеры \(icsti.su\)](http://icsti.su)

Այն կարող է չունենալ իրավաբանական անձի կարգավիճակ և կկարգավորվի առանձին օրենսդրաիրավական, նորմատիվային փաստաթղթերով:

ՀՀ-ում կլաստերային մոտեցումների դրսևորման ձև կարելի է համարել «Մեդրի» ազատ տնտեսական գոտին, որը ստեղծվել է Սյունքի մարզի Մեդրի համայնքում ¹⁷ , որը սակայն լիարժեք չի իրացնում ռեսուրսային հնարավորությունները և համընդհանուր սկզբունքները:

2. ՀՀ գյուղատնտեսության զարգացման կլաստերային քաղաքականության որդեգրումը ենթադրում է որոշակի սկզբունքների կիրառում, կառավարության դերակատարության և նախաձեռնողականության հստակեցում: Կլաստերը պետք է դիտարկել որպես ռեսուրսների մոբիլիզացման, բիզնեսի աջակցման, նորարարական արտադրության, մրցունակության բարձրացման միջոց:

Կլաստերի ձևավորման և արդյունավետ գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ է կլաստերիզացման հետևյալ հիմնական սկզբունքները.

- **Կամավոր միավորման.** կլաստերին անդամակցելը պետք է լինի կամավորությամբ՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:
- **Տարածքային տեղայնացման.** աշխարհագրորեն մոտ տեղակայված կազմակերպությունները համագործակցում են միմյանց հետ: Այս դեպքում կլաստերի մասնակից սուբյեկտները փոխկապակցված են և իրենց գործունեությամբ նպաստում են ինչպես կլաստերի ընդհանուր, այնպես էլ նրա անդամ հանդիսացող մյուս կազմակերպությունների, ձեռնարկությունների գործունեության բարելավմանը:
- **Առաջադիմության.** մեկ կամ մի քանի խոշոր և հաջողված ընկերությունները թողնում են դրական ազդեցություն ընդհանուր կլաստերի վրա՝ ապահովելով բոլոր անդամների առաջանցիկ զարգացումը:
- **Պետական աջակցության.** կլաստերի զարգացման գործում պետության համակողմանի աջակցություն:

¹⁷ ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջ՝ <https://mineconomy.am/page/360>

- **Սիներգիկ էֆեկտի.** փոխկապակցված ձեռնարկությունների և կազմակերպությունների կայուն համագործակցությունը դրական է ազդում կլաստերի ընդհանուր գործունեության վրա:
- **Արտադրության արդյունավետության.** ներառում է նյութական, աշխատանքային, ֆինանսական ռեսուրսների ռացիոնալ և արդյունավետ օգտագործումը, ինչը թույլ է տալիս նվազեցնել արտադրության վրա կատարված ծախսերը, բարձրացնել եկամտաբերությունը, արտադրանքի որակն ու մրցունակությունը:
- **Շահերի տարբերակման.** կլաստերի անդամ հանդիսացող սուբյեկտների միջև ձևավորվում է փոխշահավետ հարաբերություններ արտադրություն-սպառում ողջ շղթայով: Միևնույն ժամանակ հիմնական դրդապատճառը յուրաքանչյուր անդամի համար մնում է նույնը՝ սեփական շահը:
- **Հավասարության.** սուբյեկտները կլաստերի շրջանակներում ունենում են հավասար պայմաններ և իրավունքներ:
- **Ինքնուրույնության.** սուբյեկտների ինքնուրույնությամբ՝ հաղորդակցման միջոցով խնդիրների շրջանակի բացահայտումն ու ուրվագծումն է, իսկ դրա լուծումը՝ համատեղ գործողությունները: Այս դեպքում կլաստերն անդամների կողմից դիտարկվում է որպես մեկ կառույց և մեկ նպատակ:

Շատ երկրներում կենտրոնական կամ տարածաշրջանային իշխանությունները ֆինանսական օժանդակություն են հատկացնում կլաստերների ստեղծման ու զարգացմանը: **Պետության իրականացրած դերից կախված տարբերում են կլաստերային քաղաքականության 4 տեսակ**¹⁸

1. **Խթանող** (կատալիտիկական) կլաստերային քաղաքականություն, երբ պետությունը հանդիսանում է միջնորդ շահագրգիռ կողմերի միջև (մասնավոր կազմակերպությունների և հետազոտական կառույցների)՝ ապահովելով սահմանափակ ֆինանսական աջակցություն նախագծի իրականացմանը:

2. **Աջակցող** կլաստերային քաղաքականություն, որի դեպքում պետության խթանող քաղաքականությունը լրացվում է ներդրումային քաղաքականությամբ՝

¹⁸ Enright M. J. Regional Clusters: What we know and should know// Paper prepared for the Kiel Institute International Workshop on Innovation Clusters and Interregional Competition, 2002.- p 18

ուղղված տարածաշրջանի ենթակառուցվածքի զարգացմանը, մարքեթինգային ծառայություններին, կադրերի վերապատրաստմանը և այլն:

3. **Դիրեկտիվ** կլաստերային քաղաքականություն, երբ պետության աջակցող քաղաքականությունից բացի իրականացվում են հատուկ ծրագրեր, ուղղված տարածաշրջանի մասնագիտացմանը:

4. **Ինտերվենցիոն** կլաստերային քաղաքականություն, որի դեպքում կառավարությունն իր դիրեկտիվ գործառույթի իրականացումից բացի, ստանձնում է կլաստերների հետագա զարգացման վերաբերյալ որոշումների ընդունման պատասխանատվություն՝ իրականացնելով ակտիվ կարգավորման գործառույթ, տրանսֆերտների, սուբսիդիաների տեսքով՝ նպաստելով կլաստերների մասնագիտացմանը:

Կլաստերային մոտեցումների կիրառումը հնարավորություն է տալիս տարածաշրջանային կտրվածքով լուծել խնդիրներ հետևյալ ուղղություններով.

- Պետական քաղաքականության միջոցառումների իրականացում (պետական աջակցության ծրագրերում մասնակցություն, ենթակառուցվածքային հարցերի լոբբինգ և ծրագրերի իրականացում, կառավարման օպտիմալացում),
- Տեղեկատվության հավաքագրում և փորձի փոխանակում (անդամների միջև կապերի հաստատում, կլաստերի գործունեության հաշվետվությունների կազմում և քննարկում),
- Առևտրային փոխհամագործակցություն (արտահանման խթանում, բիզնեսին աջակցություն, շուկաների ուսումնասիրություն և հասանելիություն, գնումների համակարգում, կլաստերում մրցակցության մեղմացում),
- Կրթության և մասնագիտական որակավորման բարձրացում (մասնագետների վերապատրաստում, կառավարման համակարգի կադրերով ապահովում, նոր աշխատատեղերի ստեղծում),
- Ինովացիոն տեխնոլոգիաների կիրառում (տեխնոլոգիական ստանդարտների կիրառում, ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման աջակցություն),
- Կլաստերի ընդլայնում (spin-off մոտեցման կիրառում, տարածաշրջանային բրենդի ստեղծում, նոր անդամների ներգրավում, ՕՌԻՆ-ների ներգրավում):

3. ՀՀ գյուղական վայրերի առաջանցիկ զարգացումը ռազմավարական խնդիր է, որը հնարավոր է լուծել պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինների այնպիսի քաղաքականության իրականացմամբ, որի դեպքում կապահովվի ագրոպարենային համակարգում գործունեություն ծավալող բոլոր սուբյեկտների ներգրավվածությունը, համաչափ զարգացումն ու կայուն տնտեսական աճը: Այդպիսին կարող է հանդիսանալ կլաստերային մոտեցումների կիրառումը հատկապես այնպիսի ճյուղերում ու տարածաշրջաններում, ուր առկա են նպաստավոր բնակլիմայական, ռեսուրսային և ներուժային պայմաններ:

Կորոնավիրուսային համավարակի պայմաններում առանձնակի է կարևորվում ինչպես ագրարային ոլորտի դերը, պարենային անվտանգությունը և ապահովումը, այնպես էլ համագործակցված գործելու կարողությունը:

Կլաստերային մոտեցումների ներդրումը հնարավորություն կտա առավել արագ հաղթահարել այնպիսի խոչընդոտներ, ինչպիսիք են՝ աշխատանքների մեքենայացման ցածր մակարդակը, հիմնական ու փոխառու միջոցների ձեռքբերումը, արտադրությունում ինովացիոն տեխնոլոգիաների ներդրումը, իրացման հետ կապված դժվարությունները, և վերջապես փոխօգնությունն ու եղած ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Գիտական թեմայի իրականացման շրջանակներում ուսումնասիրության առարկա ենք դարձրել ՀՀ տարածաշրջանների ագրարային ներուժի, առկա խնդիրները, կատարվել է հողային և աշխատանքային ռեսուրսների նպատակային օգտագործման վերլուծություն:

Հաշվետու տարվա ընթացքում աշխատանքային խումբը ուսումնասիրություններ է իրականացրել նաև ՀՀ-ում գործող պարենային արժեշղթաների կազմման ու մշակման շուրջ: Վեր են հանվել հացահատիկի և հատիկաընդեղենի, պտղի և հատապտղի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքների արժեշղթաներում առանձին օղակների միջև փոխհարաբերություններում առկա խոչընդոտները, կատարվել են տնտեսական արդյունավետության ցուցանիշների հաշվարկներ: Ուսումնասիրվել են գիտելիքի և տեղեկատվության փոխանակման վիճակը, ապրանքատեսակների արտադրության, պահպանման, փաթեթավորման, տեղափոխման ընթացքում առաջացած կորուստները և

թափոնները: Բազմաբնույթ հետազոտությունների և վերլուծությունների արդյունքում ստեղծվել է տվյալների և նյութերի համակարգված բազա, որոնք կարող են օգտագործվել գիտահետազոտական աշխատանքներում:

ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերից վարելահողերի նպատակային օգտագործման ուղղությամբ առկա են որոշակի բացասական տեղաշարժեր: Վարելահողերի նպատակային օգտագործումը 2019թ. 2015թ. համեմատ բոլոր մարզերում ունեցել է ցուցանիշների վատթարացում: Առկա վարելահողերի հաշվով 2019թ. ամենացածր նպատակային օգտագործում դիտվել են Վայոց ձորի և Տավուշի մարզերում համապատասխանաբար 25.8% և 29.9%, իսկ ամենաբարձրն Արմավիրի մարզում՝ 68.9 տոկոս: ՀՀ-ում 2019թ. վարելահողերի նպատակային օգտագործումը կազմել է 51.2 տոկոս¹⁹ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ մարզերի վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի փոփոխությունը 2015-2019թթ.²⁰

Մարզ	Տարեթիվ	Վարելահողեր /հազ. հա/	Ցանքատարած. /հազ. հա/	Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը, %
Արագածոտն	2015	54.11	40.70	75.22
	2016	54.10	43.74	80.85
	2017	54.08	37.71	69.73
	2018	54.01	24.96	46.21
	2019	53.96	25.05	46.42
Արարատ	2015	25.26	23.95	94.81

¹⁹ Ցանքատարածությունների ցուցանիշները վերցվել են ՀՀԿԿ «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածքները, համախառնները և միջին բերքատվությունը» 2015-2019թթ. հրապարակումից էջ 62-63,

ՀՀ-ում և մարզերում վարելահողերի առկայության ցուցանիշները վերցվել են «ՀՀ հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվետվություն (ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտներ) 2015թ, 2016թ, 2017թ, 2018թ, 2019թ փաստաթղթերից, հղում՝ https://www.cadastre.am/page/land_balance

²⁰ 2019թ. ցանքատարածությունների ցուցանիշները վերցվել են ՀՀԿԿ «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածքները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2019թ» հրապարակումից էջ 63, իսկ 2015-2018թթ. Ցանքատարածությունների ցուցանիշները ՀՀԿԿ «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով» հրապարակումից էջ 46

Մարզերում վարելահողերի առկայության ցուցանիշները վերցվել են «ՀՀ հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվետվություն (ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտներ) 2015թ, 2016թ, 2017թ, 2018թ, 2019թ փաստաթղթերից, հղում՝ https://www.cadastre.am/page/land_balance

Մարզ	Տարեթիվ	Վարելահողեր /հազ. հա/	Ցանքատարած. /հազ. հա/	Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը, %
	2016	25.19	24.55	97.46
	2017	25.16	19.39	77.07
	2018	24.98	16.45	65.85
	2019	24.73	16.29	65.87
Արմավիր	2015	41.26	34.27	83.06
	2016	41.16	35.75	86.86
	2017	39.05	35.99	91.11
	2018	39.09	27.32	69.89
	2019	38.65	26.64	68.93
Գեղարքունիք	2015	81.74	63.95	78.24
	2016	81.73	66.65	81.55
	2017	81.70	56.04	68.59
	2018	81.58	47.08	57.71
	2019	81.55	41.72	51.16
Լոռի	2015	42.09	31.62	75.12
	2016	42.09	33.18	78.83
	2017	42.04	27.11	64.49
	2018	42.04	23.66	56.28
	2019	42.04	21.88	52.05
Կոտայք	2015	37.75	18.03	47.76
	2016	37.71	19.36	51.34
	2017	37.68	18.77	49.81
	2018	37.58	15.81	42.07
	2019	37.50	14.89	39.71
Շիրակ	2015	78.16	67.40	86.23
	2016	78.16	70.71	90.47
	2017	78.16	61.49	78.67
	2018	78.15	52.27	66.88
	2019	78.14	49.42	63.25
Սյունիք	2015	43.83	34.84	79.49
	2016	43.85	35.36	80.64
	2017	43.85	24.77	56.49
	2018	43.96	22.26	50.64
	2019	43.96	19.90	45.27
Վայոց ձոր	2015	15.96	5.72	35.84
	2016	15.94	6.86	43.04
	2017	15.71	5.17	32.91
	2018	15.63	4.51	28.85
	2019	15.74	4.06	25.79
Տավուշ	2015	25.59	16.42	64.17
	2016	25.58	16.52	64.58
	2017	25.58	8.61	33.66
	2018	25.58	7.50	29.32
	2019	25.58	7.64	29.87
ՀՀ	2015	446.66	337.48	75.76

Մարզ	Տարեթիվ	Վարելահողեր /հազ. հա/	Ցանքատարած. /հազ. հա/	Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը, %
	2016	446.41	353.46	79.18
	2017	445.97	294.54	66.04
	2018	445.56	242.32	54.39
	2019	444.85	227.92	51.24

Գյուղատնտեսությունում մրցունակության և արդյունավետության բարձրացման նախադրյալն աշխատուժով և կապիտալով (մեքենա և սարքավորումներ) ապահովվածությունն է: ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2019թ. կազմել է 2959,7 հազ. մարդ²¹, որից աշխատանքային ռեսուրսները՝ 2201,1 հազ. մարդ²² կամ մշտական բնակչության 74,4 տոկոսը:

Մարզային կտրվածքով աշխատանքային ռեսուրսների տեղաբաշխումն ունի հետևյալ տեսքը. 2018թ. տվյալներով աշխատանքային ռեսուրսների 9.5% կենտրոնացված են Կոտայքի, 9.3%՝ Արմավիրի և 9.2%՝ Արարատի մարզերում: Մնացած մարզերում ցուցանիշը նվազել է նախորդ տարիների համեմատ, ամենացածր ցուցանիշը գրանցվել է Տավուշի մարզում՝ 1.4 տոկոս: Ըստ վիճակագրության գյուղական և քաղաքային զբաղվածության տեսակարար կշիռները տարիների ընթացքում ենթարկվել են փոփոխության: Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում 2018թ. ավելացել են քաղաքային բնակչության տեսակարար կշիռերը համապատասխանաբար կազմելով՝ 15.5, 17.8 և 14.6%-ներ, իսկ գյուղական բնակչության զբաղվածությունը 2018թ. ավելացել են Արմավիրի և Արարատի մարզերում՝ համապատասխանաբար 23.2 և 19.5 տոկոսներով: Գյուղական բնակչության զբաղվածության ամենացածր ցուցանիշ դիտվել է Վայոց Ձորի մարզում՝ 1.9 տոկոս (աղյուսակ 2):

Գյուղատնտեսության ոլորտում աշխատողների տեսակար կշիռը գրեթե բոլոր մարզերում նվազել է: Միայն Արմավիրի և Գեղարքունիքի մարզերում ցուցանիշը աճել է և կազմել համապատասխանաբար՝ 30.2 և 10.3 տոկոս (Հավելված 1):

²¹ ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Բնակչություն, էջ 25
<https://www.armstat.am/file/doc/99520878.pdf>

²² ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Աշխատանքի շուկա, էջ 71
<https://www.armstat.am/file/doc/99521073.pdf>

Վերոնշյալ ուսումնասիրությունների արդյունքում ագրարային ներուժի նպատակային օգտագործման նվազման միտումները կապված են հիմնականում.

- ոռոգման համակարգերի մաշվածությունից և պակասից,
- համայնքներում տեխնիկական միջոցների առկայության ցածր մակարդակից,
- գյուղատնտեսական արտադրանքների արտադրության ստացվող ցածր եկամուտներից,
- արտադրված արտադրանքի իրացման դժվարություններից,
- սահմանամերձ գոտում գյուղատնտեսական գործունեության վտանգավորությունից,
- կլիմայական պայմանների փոփոխությունից և այլն:

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրության առումով, թերևս, զգալի դերակատարություն ունեն Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի և Արագածոտնի մարզերը, որոնց բաժին է ընկնում ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի 68.3%-ը: Վերջին 5 տարիների վիճակագրական տվյալների ուսումնասիրությունները ցույց են տալիս բուսաբուծական համախառն արտադրանքի արտադրության նվազում, որը պատճառ է ինչպես ցանքատարածությունների կրճատման, այնպես էլ իրացման խնդիրների խորացման: Այս ամենի ֆոնին հատկանշական է այն, որ նույն ժամանակահատվածում անասնաբուծության համախառն արտադրանքն ունեցել է դինամիկ աճ՝ 2014թ. համեմատ կազմելով շուրջ 23 տոկոս (Հավելված 2):

Ուսումնասիրելով ՀՀ մարզերում գյուղատնտեսական արտադրանքի արտադրության կառուցվածքը, իրականացնելով հողային և աշխատանքային ռեսուրսների օգտագործման վիճակի գնահատում, ակնհայտ է դառնում, որ յուրաքանչյուր մարզում կան ճյուղեր, որոնց հեռանկարային զարգացումը պայմանավորված է տնտեսավարող սուբյեկտների, գիտակրթական, խորհրդատվական կառույցների և պետական կառավարման մարմինների ինտեգրացիոն գործընթացների խորացման ու զարգացման հետ (Հավելված 3): Այսպես օրինակ՝ Գեղարքունիքի մարզում կարտոֆիլաբուծությունում, Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի մարզերում պտղաբուծության և խաղողագործության ճյուղերում, Լոռու, Տավուշի, Շիրակի, Սյունիքի մարզերում հացահատիկային


տնտեսությունում և անասնաբուծությունում առաջընթաց կարող է ապահովել հատկապես կլաստերիզացիան (Հավելված 4):

ՀՀ մարզերում աշխատանքային ռեսուրսները ըստ գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական զբաղվածության²³

		Աշխատանքային ռեսուրսներ /հազ.մարդ/			Զբաղվածներ /հազ. մարդ/						Գյուղատնտեսական /հազ. մարդ/			Ոչ գյուղատնտեսական /հազ. մարդ/		
					քաղաքային			գյուղական								
		2016թ	2017թ	2018թ	2016թ	2017թ	2018թ	2016թ	2017թ	2018թ	2016թ	2017թ	2018թ	2016թ	2017թ	2018թ
1.	Արագածոտն	79.8	82.6	69.8	10.2	9.9	8.0	37.9	38.6	31.4	17.9	19.5	15.3	30.2	29.0	24.0
2.	Արարատ	185.5	182.1	184.1	22.4	23.7	21.5	89.5	90.2	77.4	54.2	56.7	40.3	57.7	57.2	58.6
3.	Արմավիր	209.6	199.4	186.0	26.4	27.3	21.0	103.4	90.0	92.1	-	-	67.5	-	-	45.6
4.	Գեղարքունիք	129.7	151.5	154.1	21.3	21.6	21.2	42.1	54.7	40.6	-	-	23.0	-	-	38.8
5.	Լոռի	183.8	189.0	183.5	39.5	41.6	36.6	57.1	54.9	33.7	49.4	43.1	21.6	47.2	53.4	48.8
6.	Կոտայք	197.3	194.0	190.7	44.9	42.3	42.0	40.8	40.0	37.1	18.0	13.1	11.9	67.7	69.3	67.2
7.	Շիրակ	180.9	172.6	179.5	33.8	30.2	34.6	49.8	44.9	34.9	39.9	34.1	23.5	43.7	41.0	46.0
8.	Սյունիք	78.8	85.8	95.0	27.9	29.1	31.9	18.1	20.6	24.1	14.6	14.2	15.1	31.4	35.4	40.9
9.	Վայոցձոր	31.2	28.9	28.5	7.2	6.0	5.0	13.8	13.3	7.6	9.3	9.0	1.6	11.7	10.3	10.9
10.	Տավուշ	87.2	94.1	91.7	15.5	15.9	14.5	32.7	33.8	18.6	22.2	21.9	3.9	26.1	27.9	29.2
	ՀՀ	2011,4	2021,3	2007,3	249.1	247.6	236.3	485.2	481.0	397.5	225.5	211.6	223.7	315.7	323.5	410.0

²³ ՀՀ ՎԿ կայքէջ <https://www.armstat.am/am/?nid=651>, https://www.armstat.am/file/article/nasel_01.01.2020.pdf, https://armstat.am/file/article/marzer_2019_17.pdf

Ելնելով վերոնշյալից առավելապես կենտրոնացել ենք Լոռու, Շիրակի, Տավուշի, Արարատի և Արմավիրի մարզերում կլաստերների ձևավորման նախաձեռնություններին, ներգրավման ներուժ ունեցող ճյուղերին և մասնակիցներին (Հավելված 5):

 **Պտուղ բանջարեղենի արտադրության կլաստեր.** ՀՀ պտուղ բանջարեղենի արժեչղթայում արտադրող-վերամշակող հարաբերություններում ծառացած են մի շարք խնդիրներ, մասնավորապես ակնառու է պայմանագրային հարաբերությունների անկատարությունը, հումքի գնի սահմանման միակողմանիությունը, մթերումների դիմաց վճարումների ուշացումները և այլն: Որպես կանոն գյուղացիական տնտեսությունները մթերումներից հետո վճարման ուշացման դեպքում ի վիճակի չեն լինում պաշտպանելու իրենց իրավունքները, կնքված պայմանագրերը չեն ծառայում որպես իրավաբանական փաստաթղթեր:


Արժեչղթայում արտահանմամբ զբաղվող օղակների գործունեության վրա ազդող հիմնական գործոններն են՝ բերքի երկարատև և կարճատև պահպանման ենթակառուցվածքների անկատարությունը, արտադրանքի բարձր ինքնարժեքն ու մեծածախ շուկաների կանոնակարգվության ցածր մակարդակը, երկաթուղային ճանապարհների շրջափակումը և դեպի ՌԴ արտահանման տրանսպորտային միակ երթուղու՝ Վերին Լարսի մաքսային անցակետի հաճախակի խափանումները, արտադրանքը իրացվող երկրներում գործընկերային հարաբերությունների ձեռքբերման դժվարությունները և այլն:

Ըստ փորձագիտական գնահատականների ՀՀ-ում պտուղ բանջարեղենի արտադրության, պահպանման, փաթեթավորման, տեղափոխման ընթացքում առաջանում են մոտ 30-35% կորուստներ²⁴, իսկ թափոնների առաջացումը հիմնականում պայմանավորված է իրացման դժվարությունների հետ:

Գիտական թեմայի իրականացման շրջանակներում մշակման փուլում է Արարատի և Արմավիրի մարզերում պտուղ բանջարեղենի կլաստերի մոդելի և կառավարման համակարգի նախագիծը (Հավելված 6):

²⁴ Ոսկանյան Ա.: Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական արտադրանքի գնման (մթերման) արժեչղթայի կազմակերպման մոդել: Ազրոգիտություն և տեխնոլոգիա: ՀԱԱՀ: N (66): 2/2019: էջ 54-58 (https://library.anau.am/images/stories/grqer/Izwestiya/2_2019/voskanyan-a.pdf)

Առաջարկվող մոդելը բաղկացած է 5 բլոկից, որպես միջուկ ներկայացված է գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը, մասնավորապես՝ առաջատար կազմակերպությունը, վերամշակող ձեռնարկությունները, գյուղացիական տնտեսությունները և գյուղատնտեսական ուղղվածությամբ կոոպերատիվները: Կառավարման համակարգը բաղկացած է գլխավոր խորհրդից, քարտուղարությունից, ծրագրերի իրականացման գրասենյակից և փորձագիտական խմբերից, վերջինիս միջոցով կլաստերի սուբյեկտները ձեռք կբերեն մասնագիտական գիտելիքներ, հմտություններ և կարողություններ:

 **Հացահատիկի արտադրության կլաստեր.** Գտնում ենք, որ հատկապես՝ հացահատիկային արտադրությամբ մասնագիտացված մարզերում բարձր արդյունավետություն կապահովի կլաստերային մոտեցումների կիրառումը, որոնք առավելագույնս են համապատասխանում հացահատիկային տնտեսության կազմակերպման և կառավարման պահանջներին: Այդ իսկ պատճառով հնարավոր ենք համարում կյանքի կոչել ՀՀ Շիրակի և Տավուշի մարզերում հացահատիկային կլաստերի ձևավորման մոդելները՝ որպես ռեսուրսների արդյունավետ օգտագործման և պարենային անվտանգության ապահովման ուղի:

Ագրարային քաղաքականության և պետական աջակցության առանցքը պետք է հանդիսանա հացահատիկի, և մասնավորապես ցորենի արտադրության, ինտենսիվացումն ու ամբողջ արժեշղթայի կատարելագործմանն ուղղված ծրագրերի իրականացումը՝ նվազագույնի հասցնելով կախվածությունը ներմուծումից: Նման օրինակ քայլ կարող է հանդիսանալ ՀՀ հացահատիկային տնտեսությունում կլաստերային մոտեցումների կիրառումը:

Շիրակի մարզում նախագծվող հացահատիկի արտադրության կլաստերի միջուկը հացահատիկի արտադրությամբ զբաղվող մասնագիտացված ֆերմերային տնտեսություններն են: Մոդելում նախատեսվել է համագործակցություն պետական կառույցների, գիտակրթական հաստատությունների, ներդրանքներ մատակարարողների, միջազգային կազմակերպությունների և այլ ագրարային ոլորտին առնչվող սուբյեկտների հետ (Հավելված 7):

Շիրակի մարզի հացահատիկային կլաստերի զարգացման ծրագիրը պետք է նպատակաուղղված լինի մարզի ֆերմերային տնտեսությունների բերքատվության և շահութաբերության մակարդակի բարձրացմանը և մրցունակության ապահովմանը, որին կարելի է հասնել նորմաձությունների՝ խելացի (smart) տեխնոլոգիաների ներդրման միջոցով, մասնավորապես.

- ✓ Հացահատիկային կլաստերի գործունեության տեղեկատվական ապահովման համակարգի ստեղծում,
- ✓ Դրոնների՝ անօդաչու թռչող սարքերի օգտագործում,
- ✓ Դատչիկների և GPS մոնիթորինգ համակարգի ներդրում,
- ✓ Բլոկչեյն տեխնոլոգիաների ներդրում,
- ✓ Տրանսպորտային մոնիթորինգի համակարգի ներդրում:

Կորոնավիրուսային համավարակի և ռազմական դրության պայմաններում առավել է կարևորվում սահմանամերձ բնակավայրերում տեղական արտադրության զարգացումը, որը կնպաստի զբաղվածության մակարդակի բարձրացմանը և ֆերմերային տնտեսությունների եկամուտների կայունացմանը: ՀՀ Տավուշի մարզը տիպիկ հացահատիկացան տարածաշրջան չէ, սակայն պարենային անվտանգության առումով կարևոր է հացահատիկի և հատիկաընդեղենի արտադրության զարգացումը:

ՀՀ Տավուշի մարզի հացահատիկային տնտեսության ներկա վիճակը ուղղորդում է կիրառել կլաստերային սկզբունքներ և ձևավորել գիտակրթախորհրդատվական կլաստեր, որը հնարավորություն կտա ներգրավվածություն ապահովել ցորենի արժեշղթայի բոլոր օղակների սուբյեկտներին, դրանով իսկ ունենալ բիզնես ուղղվածություն և տարածաշրջանի կտրվածքով իրականացնել կրթական, գիտական, խորհրդատեղեկատվական ապահովվածություն (Հավելված 8):

Մեր կողմից մշակվել է գիտակրթախորհրդատվական կլաստերի կազմակերպակառավարման մոդել և կառուցվածք (Հավելված 9): Առաջարկվող գիտակրթախորհրդատվական կլաստերը բաղկացած է 4 բլոկից, որի միջուկը հանդիսանում է ՀԱԱՀ-ն (թրեյնինգ կենտրոն), ցուցադրական տնտեսություն (ընտրված գյուղացիական տնտեսություններից, որոնք ունեն նախադրյալներ),

միջազգային կազմակերպությունների հետ համագործակցող կառույցներ (CARD, Եվրասիա համագործակցության հիմնադրամ և այլն), մարզպետարան (համայնքապետարաններ): Կառավարման համակարգում ընդգրկված են Կլաստերի զարգացման մասնագիտական և գիտատեխնիկական, Դիտորդ, Պայմանագրային հարաբերությունների կարգավորման և Կլաստերի գործունեության համակարգման խորհուրդները:

4. Հետազոտական աշխատանքների կատարման շրջանակներում ուսումնասիրվել է կլաստերների ձևավորման իրավական փաստաթղթերով ապահովվածության հարցերը մի շարք երկրներում, ինչպես նաև ՀՀ օրենսդրական, իրավական և նորմատիվային ակտերը: Միջազգային փորձը վկայում է, որ մի շարք երկրներում ընդունված են կլաստերիզացիա ապահովող օրենքներ, նորմատիվային փաստաթղթեր, օրինակ Ղրղզստանում՝ «Կլաստերների մասին», Ղազախստանում՝ ««Ինովացիոն տեխնոլոգիաների պարկ» ինովացիոն կլաստերի մասին», Ռուսաստանում՝ «Մոսկվա քաղաքի նորարարական կլաստերի մասին» օրենքները, Բելառուսում՝ «Նորարարական և արդյունաբերական կլաստերների ձևավորման և զարգացման» հայեցակարգը և այլն: Եվրոպական մի շարք երկրներում կլաստերների մասին առանձին օրենքներ հիմնականում չեն ընդունվել և կանոնակարգային գործընթացը կարգավորվում է ընդհանուր օրենքներում կլաստերների գործունեության մասին առանձին դրույթներով:

ՀՀ-ում բացակայում են կլաստերներին վերաբերվող իրավանորմատիվային ակտեր: ՀՀ Կառավարության 2019-2023թթ. գործունեության ծրագրում և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում 7-րդ կետով որպես նպատակ ընդգծվում է «կրթական-գիտահետազոտական-արդյունաբերական կլաստերների ստեղծման», ինչպես նաև կլաստերների ստեղծման հայեցակարգի մշակման մասին:

Հետազոտական խումբը ձեռնամուխ է եղել մշակելու «Ագրարային նորամուծական կլաստերի մասին» ՀՀ օրենքի և «Ագրոպարենային համակարգի կազմակերպությունների և կլաստերային նախաձեռնություն իրականացնող սուբյեկտների միջև ռազմավարական համագործակցության համաձայնագրի» նախագծեր:

«Ագրարային նորամուծական կլաստերի մասին» ՀՀ օրենքը պետք է կարգավորի իրավահարաբերությունները, որոնք առաջանում են նորամուծական ագրարային կլաստերի ստեղծման և գործունեության իրականացման ընագավառում, ինչպես նաև ընդգրկի հետևյալ դրույթները.

- հասկացությունները, նպատակը և խնդիրները,
- ՀՀ կառավարության լիազորությունները,
- մասնագիտական կազմակերպության անհրաժեշտությունը, կլաստերում կառավարման մարմինների ձևավորման կարգը և գործունեությունը,
- մեթոդական, կազմակերպական, փորձագիտական, վերլուծական, տեղեկատվական ապահովվածության հարցերը,
- գրանցամատյանների վարման և նորարարական նախագծերի ընտրության և ներդրման կարգը,
- կլաստերի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները,
- փորձագիտական հանձնաժողովների ստեղծման կարգը, գործառույթները, կազմը, մասնակիցներին ներկայացվող պահանջները և այլն:

Կլաստերի լիզացման գործընթացում կարևորագույն փաստաթուղթ է հանդիսանում «Ագրոպարենային համակարգի կազմակերպությունների և կլաստերային նախաձեռնություն իրականացնող սուբյեկտների միջև ռազմավարական համագործակցության համաձայնագիրը»:


Առաջարկվող համաձայնագրի տարբերակում ներկայացված է հետևյալ դրույթները.

- համաձայնագրի առարկան և նպատակը,
- կլաստերի հնարավոր մասնակիցները,
- կլաստերի մասնակիցների պարտավորությունները,
- համաձայնագրի կնքման ժամկետները,
- համաձայնագրում փոփոխությունների կատարման, վեճերի և տարաձայնությունների լուծման կարգերը և այլն:

ՀՀ-ում, իրավանորմատիվային բազայի պայմաններում, կարող են գործել ագրարային կլաստերների ձևավորման և գործունեության կառավարման հետևյալ ձևերը, երբ.

1. կլաստեր է նախաձեռնում համեմատաբար խոշոր գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտը, վերամշակող ձեռնարկությունը, այդ թվում ոչ ռեզիդենտ,
2. կլաստեր է ձևավորում պետական կառավարման մարմինը (հանրապետական, մարզային, տեղական ինքնակառավարման),
3. կլաստեր է ձևավորում մասնավոր – պետական համագործակցությամբ և գործընկերությամբ:

5. ՀՀ բնակլիմայական պայմանները, գյուղատնտեսության և վերամշակող արդյունաբերության մասնագիտացումը, ագրարային հատվածի հեռանկարային զարգացման միտումները, այդ թվում ԵԱՏՄ անդամակցության շրջանակներում, կարող են հիմնավորել միջպետական բնույթի կլաստերների ձևավորման անհրաժեշտությունը (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Միջպետական կլաստերի առաջարկվող մոդել

Այսպիսի միջպետական կլաստերի գործառույթները կարող են համամասնորեն բաշխվել ՀՀ և ԵԱՏՄ այլ անդամ պետությունների միջև: ՀՀ և ԵԱՏՄ այլ անդամ երկրների հիմնական գործառույթները կարող են լինել.

- ✓ ՀՀ-ում գյուղատնտեսական արտադրանքի որակյալ արտադրության և վերամշակման ապահովում,

- ✓ ՀՀ-ում գյուղատնտեսական թարմ և վերամշակված արտադրանքի տեսակավորում, փաթեթավորում, դասավորում արկղերում, ԵԱՏՄ անդամ երկրներ արտադրանքի փոխադրման կազմակերպում ՀՀ տրանսպորտային միջոցներով,

- ✓ ՀՀ և ԵԱՏՄ անդամ պետություններում գյուղատնտեսական թարմ և վերամշակված արտադրանքի սառնարանային պահպանում,

- ✓ Գյուղատնտեսությունում գիտական արդյունքների փոխանակում և համատեղ գիտական հետազոտությունների անցկացում,

- ✓ ՀՀ նորմատիվաիրավական ակտերի մշակում և միջպետական կլաստերների մասին օրենքի ընդունում,

- ✓ ՀՀ պետական ծրագրերում կլաստերի սուբյեկտներին առաջնահերթության տրամադրում,

- ✓ Հասանելի պայմաններով (մատչելի գներ, վճարման հետաձգում և այլն) ԵԱՏՄ երկրներից ներդրանքների մատակարարում,

- ✓ ԵԱՏՄ շուկաներում ՀՀ գյուղատնտեսական թարմ և վերամշակված արտադրանքի իրացման պայմանագրերի կնքման գործընթացին աջակցություն,

- ✓ ՀՀ և ԵԱՏՄ անդամ պետությունների շուկաներում տիրող իրավիճակի, գների վերաբերյալ տեղեկատվության պարբերական տրամադրում:

Ըստ էության ԵԱՏՄ համաձայնեցված ագրարային քաղաքականության իրականացումը ենթադրում է ինտեգրված գործունեություն անդամ երկրների միջև:

6. Հայաստանի գյուղատնտեսությունում կլաստերների ձևավորումը օբյեկտիվ անհրաժեշտություն է դառնում: Այն կարող է որոշիչ դերակատարություն ունենալ պարենային արժեշտանքներում առկա խոչընդոտների հաղթահարման, նորարարական տեխնոլոգիաների ներդրման, ենթակառուցվածքների զարգացման և ագրարային ոլորտի խնդիրների լուծման գործում: Ագրարային ոլորտում

կլաստերային զարգացման հայեցակարգը սահմանում է կլաստերային քաղաքականության նպատակը, խնդիրները և պետական աջակցության ուղղությունները: Ագրարային ոլորտում կլաստերային քաղաքականության իրականացման հիմնական **նպատակն է** ապահովել տնտեսական աճի բարձր տեմպեր և մրցունակ արտադրանքի թողարկում կլաստերի մասնակիցների՝ ֆերմերային տնտեսությունների, պետական կառավարման մարմինների, հետազոտական, կրթական և այլ սուբյեկտների միջև արդյունավետ համագործակցության միջոցով: Ագրարային ոլորտում կլաստերային քաղաքականության **խնդիրներն են**.

1. մշակել ագրարային ոլորտում կլաստերների ձևավորման, հետագա զարգացման և մասնակիցների իրավահարաբերությունները կարգավորող համապատասխան նորմատիվ իրավական ակտեր,
2. տրամադրել նպատակային դոտացիաներ գիտահետազոտական մշակումներ իրականացնելու համար,
3. մշակել հարկային արտոնությունների համակարգ կլաստերի մասնակիցների համար,
4. ներդնել բուսաբուծության ոլորտում ագրոտեխնիկական առաջադիմական տեխնոլոգիաներ,
5. իրականացնել օրգանական գյուղատնտեսության զարգացման, սելեկցիայի և սերմնաբուծության համակարգի զարգացման ծրագրեր,
6. ֆինանսավորել համատեղ մարքեթինգային նախագծերը,
7. աջակցել կլաստերի մասնակիցներին նորամուծական գործունեության արդյունքների առևտրայնացմանը,
8. ապահովել ինտելեկտուալ սեփականության և հեղինակային իրավունքի օրենսդրական պաշտպանությունը,
9. կլաստերի մասնակիցների կադրային պոտենցիալի զարգացում,
10. կատարելագործել գյուղատնտեսական մթերքների իրացման մեխանիզմները, համապատասխան ենթակառուցվածքների զարգացում:

Հարկավոր է ընդգծել կլաստերային քաղաքականությունը շատ երկրներում բավականին ակտիվ է ներդրվում և կլաստերները տնտեսական զարգացման գերակայություններ են սահմանվում, ծառայում են որպես ֆերմերային տնտեսությունների, փոքր և միջին կազմակերպությունների մրցունակության բարձրացման և նորամուծությունների խթանման գործիք: Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա մշակվել է կլաստերային քաղաքականության պետական աջակցության միջոցառումները:

Հայաստանի Հանրապետությունում ագրարային ոլորտում կլաստերային քաղաքականության իրականացման **առաջին փուլում պետք է** իրականացվեն հետևյալ միջոցառումները.

- ագրարային կլաստերների ձևավորման, հետագա զարգացման և մասնակիցների իրավահարաբերությունները կարգավորելու նպատակով նորմատիվ իրավական ակտերի մշակում, համապատասխան օրենքի ընդունում,
- ագրարային կլաստերների զարգացման ծրագրերի և ռազմավարությունների մշակում,
- արդյունաբերական քաղաքականության համար պատասխանատու պետական լիազորված մարմինները պետք է հանդիսանան միջնորդ շահագրգիռ կողմերի միջև՝ ֆերմերային տնտեսությունների, միջազգային կազմակերպությունների, հետազոտական կառույցների, ֆինանսավարկային կազմակերպությունների և վերամշակող կազմակերպությունների միջև, ապահովելով սահմանափակ ֆինանսական աջակցություն տարբեր նորարարական նախագծերի իրականացման,
- ագրարային կլաստերի անձնակազմի վերապատրաստման նպատակով համապատասխան դասընթացների, սեմինարների, վեբինարների կազմակերպում:

Կլաստերային քաղաքականության իրականացման **երկրորդ փուլում** պետության **խթանիչ գործառույթը** պետք է լրացվի ներդրումային քաղաքականությամբ, ուղղված կլաստերի մասնակիցների մրցունակության բարձրացմանը.

- ագրարային կլաստերի մասնակիցների համար ներդրումային և նորամուծական նախագծերի իրականացման համար հարկային արտոնությունների համակարգի ձևավորում,
- առավել արդյունավետ ներդրումային նախագծերի իրականացման ուղղակի ֆինանսավորում՝ սուբսիդավորում մինչև 60%,
- արտաքին տնտեսական գործունեության խթանում,
- ագրարային կլաստերի ենթակառուցվածքի զարգացում՝ բիզնես ինկուբատորների, նորարարական, ինժեներական և այլ կենտրոնների զարգացում,
- տեղեկատվական, խորհրդատվական աջակցություն, կադրային պոտենցիալի զարգացման և վերապատրաստման աջակցություն,
- նորարարությունների ներդրման համար համապատասխան ֆոնդերի ստեղծում,
- կոլեկտիվ մարքեթինգային նախագծերի իրականացմանն աջակցություն, մարքեթինգային հետազոտությունների համատեղ ֆինանսավորում:

Երրորդ փուլում պետության աջակցող քաղաքականությունից բացի ագրարային կլաստերի մասնագիտացմանը ուղղված ծրագրերի մշակում և իրականացում.

- երկարաժամկետ պայմանագրային հարաբերությունների հաստատման աջակցություն,
- նպատակային դոտացիաների տրամադրում գիտահետազոտական մշակումներ իրականացնելու համար,
- մտավոր սեփականության և հեղինակային իրավունքի օրենսդրական պաշտպանության ապահովում:

«ՀՀ գյուղատնտեսության զարգացման կլաստերային քաղաքականության առաջադրումը և դրա կիրառման նախադրյալները» գիտական թեմայի կատարման ընթացքում ուսումնասիրությունները վկայում են, որ առկա

մարտահրավերների հաղթահարման համար անհրաժեշտ է հանրապետության տնտեսությունում ապահովել հավասարակշռվածություն ու կայունություն:

ՀՀ համար առանձնակի կանորված է պարենային անվտանգությունը, որը իրավամբ հանդիսանում է ազգային անվտանգության բաղկացուցիչ մասը: Ունենալով սահմանափակ հողային ռեսուրսներ, այդ թվում գյուղատնտեսական նշանակության, որի շուրջ կեսը նպատակային չի օգտագործվում, թերևս ագրարային քաղաքականությունը պետք է ուղղել չբնակեցված 33 անուն գյուղերի վերակենդանացմանը: Հարկավոր է գտնել և առաջարկել նման գյուղերի զարգացման այնպիսի մոդել, ուր առավելագույնս կապահովվի կյանքի և աշխատանքի կազմակերպման, կզուգակցվեն ստեղծարար աշխատանքի և անվտանգ ապրելու գործոնները: Այդպիսին կարող է հանդիսանալ կոոպերացիոն սկզբունքների լայնամասշտաբ կիրառումը:

Քաղաքական և տնտեսական բավականին բարդ պայմանները առաջ են բերում առանձին տարածաշրջաններում գյուղատնտեսության և մյուս ոլորտների միջև փոխկապակցված ու համակարգված գործունեության անհրաժեշտություն: Հաշվի առնելով, ՀՀ առանձնահատկությունները և տնտեսության զարգացման համաշխարհային փորձը, իրատեսական ենք համարում կլաստերային մոտեցումների կիրառումն ու քաղաքականության իրականացումը: ՀՀ ագրարային ոլորտում կլաստերային մոտեցումների կիրառումը հնարավորություն կտա պարենային արժեշտիների օղակներում տեղեկատվության և փորձի փոխանակման, առևտրային հարաբերությունների հաստատման, մասնագիտական որակավորման բարձրացման, ինովացիոն տեխնոլոգիաների կիրառման և այս ամենին գործուն մասնակից դարձնել, պատասխանատվության շրջանակներ սահմանել նաև տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների համար:

Օգտագործված գրականություն և նյութեր

1. ՀՀՎԿ «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյատնկարկների տարածքները, համախառնները և միջին բերքատվությունը» 2015-2019թթ. հրապարակումից էջ 62-63
2. ՀՀՎԿ «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով» տարածքային վիճակագրություն, 2015-2019թ.
3. ՀՀ ՎԿ, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը, 2020թ. հունվարի 1-ի դրությամբ (https://www.armstat.am/file/article/nasel_01.01.2020.pdf)
4. ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Բնակչություն, էջ 25 (<https://www.armstat.am/file/doc/99520878.pdf>)
5. ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Աշխատանքի շուկա, էջ 71 (<https://www.armstat.am/file/doc/99521073.pdf>)
6. ՀՀ հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվետվություն (ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտներ) 2015թ, 2016թ, 2017թ, 2018թ, 2019թ փաստաթղթերից, (https://www.cadastre.am/page/land_balance)
7. Ոսկանյան Ա.: Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական արտադրանքի գնման (մթերման) արժեշղթայի կազմակերպման մոդել: Ագրոգիտություն և տեխնոլոգիա: ՀԱԱՀ: N (66): 2/2019: էջ 54-58 (https://library.anau.am/images/stories/grqer/lzwestiya/2_2019/voskanyan-a.pdf)
8. Асаул А. Н. Организация предпринимательской деятельности: Санкт-Петербург, 2005.- с.110, 368 с.
9. Аширбекова Л.Ж., Абенов К./ Международный опыт развития кластеров на региональном, национальном и международном уровнях/ Международный экономический форум 2013 (<http://be5.biz/ekonomika1/r2013/2963.htm>)
10. А. Акопян// Роль кластеров в развитии современных национальных инновационных систем субъектов мирового хозяйства// Диссертация// М.- 2016. С. 77-78 (https://guu.ru/files/dissertations/2016/06/akopyan_a_r/dissertation.pdf)

11. А. Шустов// Кластеры в ЕАЭС: новый двигатель интеграции// Евразия эксперт, 2019 (<https://eurasia.expert/klastery-v-eaes-novyy-dvigatel-integratsii/>)
12. Инновационно-технологические кластеры стран – членов международного центра научной и технической информации 2013 г. ,– стр 19 ([Инновационно-технологические кластеры \(icsti.su\)](#))
13. Конкуренция.: Пер. с англ.-М.: Издательский дом «Вильямс», 2005.- 608с.: ил.- Парал.тит.англ.
14. Ксенофонтова О. Л.// Опыт зарубежных стран по созданию и функционированию кластеров: модельный подход// «Современные наукоемкие технологии. Региональное приложение» N2 (42) 2015 (<https://cyberleninka.ru/article/n/opyt-zarubezhnyh-stran-po-sozdaniyu-i-funktsionirovaniyu-klasterov-modelnyy-podhod/viewer>)
15. Карта слов и выражений русского языка www.kartaslov.ru
16. Программа развития Первого зернового кластера производителей сельскохозяйственной и промышленной продукции, утверждена постановлением Правительства Новосибирской области от 24.12.2019 № 496-п
17. Третьяк В.П., Кластеры предприятий, 2011г. с.33
18. Enright M J. Why Clusters are the Way to Win the Game? // Word Link, No: 5, July/August, 1992. – pp. 24-25.
19. Enright M. J. Survey on the Characterization of Regional Clusters: Initial Results. Working Paper // Institute of Economic Policy and Business Strategy: Competitiveness Program University of Hong Kong. 2000. p. 2, /21 p/
20. Enright M. J. Regional Clusters: What we know and should know// Paper prepared for the Kiel Institute International Workshop on Innovation Clusters and Interregional Competition, 2002.- p 18
21. OECD, Competitive Regional Clusters: National Policy Approaches, 2007, (<http://www.oecd.org/cfe/regional-policy/competitiveregionalclustersnationalpolicyapproaches.htm>)
22. Կանադայի ցորենի ազգային կլաստերի պաշտոնական կայքէջ <https://www.wheatresearch.ca/wheat-cluster>

23. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջ՝
<https://mineconomy.am/page/360>
24. ՀՀ ՎԿ պաշտոնական կայքէջ՝ www.armstat.am
25. Clusterland upper Austria <http://www.clusterland.at>
26. <https://andshestopalov.livejournal.com/13757.html>

Հավելված 1

ՀՀ մարզերում աշխատանքային ռեսուրսներն ըստ գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական զբաղվածության տոկոսներով արտահայտած ²⁵

		Աշխատանքային ռեսուրսներ /տոկոս/			Զբաղվածներ /տոկոս/						Գյուղատնտեսական /տոկոս/			Ոչ գյուղատնտեսական /տոկոս/		
					քաղաքային			գյուղական								
		2016թ	2017թ	2018թ	2016թ	2017թ	2018թ	2016թ	2017թ	2018թ	2016թ	2017թ	2018թ	2016թ	2017թ	2018թ
1.	Արագածոտն	4,0	4,1	3,5	4,1	4,0	3,4	7,8	8,0	7,9	7,9	9,2	6,8	9,6	9,0	5,9
2.	Արարատ	9,2	9,0	9,2	9,0	9,6	9,1	18,4	18,8	19,5	24,0	26,8	18,0	18,3	17,7	14,3
3.	Արմավիր	10,4	9,9	9,3	10,6	11,0	8,9	21,3	18,7	23,2			30,2			11,1
4.	Գեղարքունիք	6,4	7,5	7,7	8,6	8,7	9,0	8,7	11,4	10,2			10,3			9,5
5.	Լոռի	9,1	9,4	9,1	15,9	16,8	15,5	11,8	11,4	8,5	21,9	20,4	9,7	15,0	16,5	11,9
6.	Կոտայք	9,8	9,6	9,5	18,0	17,1	17,8	8,4	8,3	9,3	8,0	6,2	5,3	21,4	21,4	16,4
7.	Շիրակ	9,0	8,5	8,9	13,6	12,2	14,6	10,3	9,3	8,8	17,7	16,1	10,5	13,8	12,7	11,2
8.	Սյունիք	3,9	4,2	4,7	11,2	11,8	13,5	3,7	4,3	6,1	6,5	6,7	6,8	9,9	10,9	10,0
9.	Վայոցձոր	1,6	1,4	1,4	2,9	2,4	2,1	2,8	2,8	1,9	4,1	4,3	0,7	3,7	3,2	2,7
10.	Տավուշ	4,3	4,7	4,6	6,2	6,4	6,1	6,7	7,0	4,7	9,8	10,3	1,7	8,3	8,6	7,1
	ՀՀ	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0

²⁵ ՀՀ ՎԿ կայքէջ <https://www.armstat.am/am/?nid=651>, https://www.armstat.am/file/article/nasel_01.01.2020.pdf, https://armstat.am/file/article/marzer_2019_17.pdf

Հավելված 2

Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ըստ մարզերի²⁶

մլրդ դրամ

Մարզ	Բուսաբուծություն					Անասնաբուծություն					Ընդամենը					Տեսակարար կշիռը, %				
	2014	2015	2016	2017	2018	2014	2015	2016	2017	2018	2014	2015	2016	2017	2018	2014	2015	2016	2017	2018
Արմավիր	131.7	137.0	136.1	139.7	126.8	42.0	42.3	40.4	44.5	50.7	173.7	179.3	176.5	184.2	177.5	17.7	18.9	20.0	20.3	19.9
Արարատ	113.3	108.9	106.3	93.0	91.1	28.1	28.7	28.6	32.0	33.7	141.4	137.6	134.9	125.0	124.8	14.4	14.6	15.4	13.8	14.0
Գեղարքունիք	117.4	72.9	48.9	52.9	44.2	60.8	62.5	62.7	69.7	74.0	178.2	135.4	111.6	122.6	118.2	18.1	14.3	12.7	13.5	13.2
Շիրակ	57.5	57.3	50.8	41.4	35.5	51.5	52.2	50.9	58.0	62.4	109.0	109.5	101.7	99.4	97.9	11.1	11.6	11.6	10.9	11.0
Արագածոտն	57.1	57.8	45.5	41.2	40.3	41.7	42.2	41.5	47.2	51.0	98.8	100.0	87.0	88.4	91.3	10.1	10.6	9.9	9.7	10.2
Լոռի	32.2	31.5	24.9	29.0	21.6	41.6	43.6	44.3	50.0	51.6	73.8	75.1	69.2	79.0	73.2	7.5	7.9	7.9	8.7	8.2
Կոտայք	19.3	21.3	19.6	27.6	21.3	40.5	40.2	40.8	45.8	51.6	59.8	61.5	60.4	73.4	72.9	6.1	6.5	6.9	8.1	8.2
Սյունիք	33.1	30.6	26.6	20.5	15.4	37.1	38.3	38.0	41.6	48.0	70.2	68.9	64.6	62.1	63.4	7.1	7.3	7.4	6.8	7.1
Տավուշ	22.0	21.8	16.0	13.3	11.1	23.4	24.2	23.6	26.6	28.2	45.4	46.0	39.6	39.9	39.3	4.6	4.9	4.5	4.4	4.4
Վայոցձոր	6.9	6.6	7.6	7.3	5.7	14.5	14.8	14.3	16.7	16.6	21.4	21.4	21.9	24.0	22.3	2.2	2.3	2.5	2.6	2.5
ՀՀ	595.2	550.0	486.7	469.3	415.8	387.8	395.4	391.8	439.3	477.1	983.0	945.4	878.5	908.6	892.9	100	100	100	100	100

²⁶Տվյալները վերցված են ՀՀ ՎԿ պաշտոնական էջ կայքից՝ www.armstat.am

Հավելված 3

Գյուղատնտեսական համախառն արտադրանքի կառուցվածքն ըստ ՀՀ մարզերի²⁷

Հազար տոննա

Գյուղատնտեսական արտադրանք	Տարեթիվ	Արմավիր	Արարատ	Գեղարքունիք	Շիրակ	Արագածոտն	Լոռի	Կոտայք	Սյունիք	Տավուշ	Վայոց ձոր
Կարտոֆիլ	2017	56.2	21.7	205.0	93.3	30.0	73.7	20.7	28.2	13.6	4.5
	2018	44.2	16.4	168.9	69.6	19.2	52.4	13.2	19.0	9.9	1.9
	2019	42.9	14.6	170.2	67.9	22.7	49.4	12.0	17.4	5.0	1.6
Բանջարաբոստանային մշակաբույսեր	2017	448.0	223.0	36.8	49.1	16.8	27.7	22.4	15.7	8.6	11.4
	2018	291.4	200.9	35.2	31.5	10.6	18.1	18.7	9.6	7.2	4.4
	2019	286.7	217.2	31.4	23.4	7.2	15.0	21.3	7.2	7.1	4.5
Պտուղ, հատապտուղ	2017	80.6	105.4	13.3	6.0	72.7	7.9	37.5	12.1	11.8	8.1
	2018	91.9	92.8	11.9	5.1	88.8	6.4	22.9	5.9	9.2	4.4
	2019	92.1	79.7	13.5	2.8	51.6	5.4	15.5	11.9	9.7	3.8
Խաղող	2017	90.3	95.2	-	-	8.0	0.3	0.8	0.9	9.8	4.1
	2018	85.4	70.3	-	-	7.5	0.1	0.2	0.5	9.9	5.5
	2019	95.7	92.2	-	-	3.2	0.1	0.1	0.6	11.2	3.9
Գյուղատնտեսական կենդանի և թռչուն (կենդանի քաշով)	2017	19.7	13.9	30.4	25.7	19.6	22.5	19.0	19.0	10.8	7.1
	2018	20.6	13.4	29.8	24.9	19.1	20.8	19.8	20.4	10.4	5.8
	2019	21.6	13.4	28.9	24.7	19.9	20.3	20.5	19.0	10.2	5.9
Կաթ	2017	49.1	46.7	142.5	116.4	89.4	95.0	69.2	76.8	43.5	26.5
	2018	46.3	41.1	125.6	110.7	81.7	84.9	69.1	71.0	40.1	39.4
	2019	39.6	40.0	122.4	101.1	80.9	82.1	67.2	68.9	39.4	23.9
Ձու (մլն հատ)	2017	141.3	62.5	63.1	45.4	69.2	50.4	125.7	44.4	50.8	21.8
	2018	158.9	64.3	64.1	45.5	83.9	51.0	125.1	44.8	50.8	30.3
	2019	175.5	59.5	55.7	45.6	76.4	47.9	135.9	40.1	48.2	28.4

²⁷ Տվյալները վերցված են ՀՀ ՎԿ պաշտոնական էջ կայքից՝ www.armstat.am

Հավելված 4

ՀՀ-ում հնարավոր կլաստերների տեղաբաշխումը



Հավելված 5


Կլաստերներում ընդգրկվելու ագրարային ներուժը Լոռու, Շիրակի, Տավուշի, Արարատի և Արմավիրի մարզերում

Լոռու մարզ	
Մարզի մասնագիտացումը	Կաթնամսային անասնապահություն, կարտոֆիլաբուծություն, հացահատիկային տնտեսություն, կերարտադրություն, բանջարաբուծություն:
Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերը	6 հատ
Ձեռնարկություններ	«Սերմնաբուծություն» ՍՊԸ, «Ապագան մերն է» կոոպերատիվը, որի հիմնական գործունեությունը բարձրարժեք կուլտուրաների աճեցումն է, «Վլադ Հակոբյանի» անվան համակցված կերերի գործարանը, «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ» Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը, Լոռու մարզի գործատուների միությունը, Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ) Լոռու մասնաճյուղը


Տավուշի մարզ	
Մարզի մասնագիտացումը	Մսակաթնային տավարաբուծություն, հացահատիկային տնտեսություն, կարտոֆիլագործություն, խոզաբուծություն, ոչխարաբուծություն, պտղաբուծություն, խաղողագործություն, թռչնաբուծություն:
Տոհմային անասնաբուծական տնտեսություններ	«Հիմնա Տավուշ» զարգացման հիմնադրամի Լուսաձորի անասնաբուծական համալիր (150 գլուխ Սիմենթալ, Ջերսեյ) և 6 համայնքներում անասնաբուծական մինի ֆերմաներ: Այգեհովիտի խոզաբուծական տնտեսություն (615 գլուխ), որը հիմնվել է մասնավոր ներդրողի կողմից: Դիլիջանի «Դիլի» ՍՊԸ (80 գլուխ Սիմենթալ)
Պանրի արտադրամաս	«ԴԻԼԻ» ՍՊԸ-ն, որն արտադրում է Իտալական «մոցարելլա» պանիր, սերուցք, կաթ, հալած յուղ
Ձեռնարկություններ	Հայաստանի փոքր և միջին ձեռնարակատիրության զարգացման ազգային կենտրոն հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ) Տավուշի մասնաճյուղը
Շիրակի մարզ	
Մարզի մասնագիտացումը	Մսակաթնային տավարաբուծություն, հացահատիկային տնտեսություն, կարտոֆիլաբուծություն, բանջարաբուծություն, ոչխարաբուծություն:
Տոհմային անասնաբուծական տնտեսություններ	առկա է 1 տոհմային տնտեսություն 18 անասնազվխաքանակով
Ձեռնարկություններ	«Անիվ» ԲԲԸ-ն, որը արտադրում է տրանսպորտային միջոցներ և սարքավորանքներ, «Էլեգանտ Շիկ» և «Տավրոս» ՍՊԸ-ները, որոնք զբաղվում են կոշիկի և կաշվի արտադրությամբ:
Արարատի մարզ	
Մարզի մասնագիտացումը	Բանջարեղենային մշակաբույսերի արտադրություն, խաղողագործություն, պտղաբուծություն, կաթնամսային տավարաբուծություն, կարտոֆիլաբուծություն, հացահատիկային տնտեսություն:
Ինտենսիվ այգիներ	94,18 հա
Կաթիլային ոռոգման համակարգեր	794,42 հա
Հակակարկտային կայաններ	68 հատ
Գյուղացիական տնտեսություններ	49116 գյուղացիական տնտեսություններից 439 խոշոր
Ջերմոցներ և ջերմատներ	360 հա
Սառնարանային տնտեսությունների հզորություն	11.9 հազ. տոննա
Մեծածախ շուկաներ	2020թ. բացվել և գործում է խոշոր գյուղատնտեսական մթերքների մեծածախ շուկա
Ձեռնարկություններ	Առկա են 17 խաղողի և 6 պտուղ բանջարեղենի վերամշակող կազմակերպություններ. «Ավշարի գինու գործարան» ՍՊԸ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ

	«Ավշար Պրոդ» ՍՊԸ «Ալիշան» ՍՊԸ «Բորոդինո» ՍՊԸ «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ի Այգավանի մասնաճյուղ
ԶՕԸ	3 ընկերություն
Գիտահետազոտական և կրթական հաստատություններ	«Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ
Արմավիրի մարզ	
Մարզի մասնագիտացումը	Բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրություն, խաղողագործություն, հացահատիկային տնտեսություն, կաթնամսային տավարաբուծություն, պտղաբուծություն, թռչնաբուծություն, խոզաբուծություն, կարտոֆիլաբուծություն:
Ինտենսիվ այգիներ	163,4 հա
Կաթիլային ոռոգման համակարգեր	1635,74 հա
Հակակարկտային կայաններ	79 հատ
Գյուղացիական տնտեսություններ	1897 գյուղացիական տնտեսություններից 199 խոշոր
Ջերմոցներ և ջերմատներ	814,61 հա
Սառնարանային տնտեսությունների հզորություն	21,1 հազ. տոննա
Մեծածախ շուկաներ	գործում են 2 խոշոր գյուղատնտեսական մթերքների մեծածախ շուկաներ
Ձեռնարկություններ	Առկա են 7 խաղողի և 6 պտուղ բանջարեղենի վերամշակող կազմակերպություններ. «ՄԱՊ» ՓԲԸ «Ոսկեհատ» ՍՊԸ «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ի Արմավիրի մասնաճյուղ «Կոնսեր» ՍՊԸ «Էջմիածնի պահածոների գործարան» ԲԲԸ «Ագրար Արմավիր» ՍՊԸ
ԶՕԸ	3 ընկերություն
Գիտահետազոտական և կրթական հաստատություններ	«Երկրագործության գիտական կենտրոն» ՓԲԸ «Էջմիածնի ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈՒԱԿ-ը «Ոսկեհատ» ՈՒՓՏ «Ոսկեհատի խաղողապտղագինեգործմանության գիտական կենտրոն» «Ագրոտեխնոլոգիական գիտական կենտրոն» Էջմիածնի գյուղատնտեսական քոլեջ «Արմավիրի տարածաշարջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ

Հավելված 6.1. Պտուղ բանջարեղենի արտադրության կլաստերի մոդել




Հավելված 6.2. Պտուղ բանջարեղենի արտադրության կլաստերի կառավարման համակարգի մոդել




**Հավելված 6.3. ՀՀ-ում պտուղ բանջարեղենի արժեշղթայում կլաստերի
ձևավորման և գործարկման ճանապարհային քարտեզ**

1-ին փուլ	
Քայլ 1	Ագրարային ոլորտի զարգացման կլաստերային քաղաքականության որդեգրում, օրենսդրական դաշտի ուսումնասիրություն և «Կլաստերի մասին» ՀՀ օրենքի մշակում և ընդունում, նորմատիվային ակտերի ընդունում
Քայլ 2	Ագրոպարենային համակարգի կազմակերպությունների և կլաստերային նախաձեռնություն իրականացնող սուբյեկտների միջև ռազմավարական համագործակցության համաձայնագրի մշակում և կիրառում
Քայլ 3	Պիլոտային ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն քննարկման նպատակով
Քայլ 4	Արարատ - Արմավիր մարզերի «Կլաստերի գործարկման» հիմնադրամի ստեղծում
2-րդ փուլ	
Քայլ 5	Առաջատար կազմակերպության ընտրություն և միջուկի ձևավորման աշխատանքների իրականացում
Քայլ 6	2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ բլոկների հնարավոր սուբյեկտներին համագործակցության առաջարկում և համաձայնագրերի կնքում
Քայլ 7	Կառավարման համակարգի ձևավորման աշխատանքների իրականացում
Քայլ 8	Կլաստերի քարտուղարության ստեղծում և աշխատակիցների ներգրավվում, գործառույթների իրականացում
Քայլ 9	Ծրագրերի իրականացման գրասենյակի աշխատանքների կազմակերպում
Քայլ 10	Կլաստերի գործունեության տարեկան արդյունքների քննարկում և հետազդեցության գնահատում


Շիրակի մարզի հացահատիկային կլաստերի կառուցվածքային մոդել




ՀՀ Տավուշի աշնանացան ցորենի ցանքատարածությունների և համախառն բերքի դինամիկան



Հավելված 9.1. ՀՀ Տավուշի մարզում գիտակրթախորհրդատվական կլաստերի մոդել



Հավելված 9.2. ՀՀ Տավուշի մարզում գիտակրթախորհրդատվական կլաստերի կառավարման համակարգի մոդել



I. ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիտական հրապարակումներ

1. Ա. Ոսկանյան, Ս. Հովհաննիսյան// Գյուղատնտեսական արտադրանքների մեծածախ իրացման հնարավորություններն ու հեռանկարները ՀՀ-ում// «Գիտական Արցախ» պարբերական, 1-ին համար, 2020թ., էջ 145-154:
2. Կ. Մնացականյան, Մ. Ղազարյան// ՀՀ-ում գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման անհրաժեշտությունը// «Գիտական Արցախ» պարբերական, 1-ին համար, 2020թ., էջ 138-145:
3. А. Восканян Н. Купелянц// НЕОБХОДИМОСТЬ ОБЕСПЕЧЕНИЯ ХОЛОДИЛЬНОГО ХРАНЕНИЯ ПРОДУКЦИИ РАСТЕНИЕВОДСТВА В РАМКАХ ПЕРСПЕКТИВЫ СОЗДАНИЯ СИСТЕМЫ ОРЦ В РА НА ПРИМЕРЕ АРАРАТСКОГО МАРЗА// Շիրակի Մ. Նալբանյան անվան Պետական Համալսարան, Հանրապետական գիտաժողով 85 Նոյեմբերի 8-9, 2019
4. Ա. Ոսկանյան, Կ. Մնացականյան, Մ. Ղազարյան// ՀՀ-ում գյուղատնտեսական ուղղվածությամբ կոոպերատիվներում խնդիրները և լուծման ուղիները// Շիրակի Մ. Նալբանյան անվան Պետական Համալսարան, Հանրապետական գիտաժողով 85 Նոյեմբերի 8-9, 2019
5. Казарян Э. С., Восканян А. Е., Оганесян М. Э.// Кластерная политика - как инструмент повышения конкурентоспособности аграрного сектора республики Армения// Инновационное развитие АПК: экономические проблемы и перспективы: материалы XV междунар. науч.-практич. конф. посвященной 60-летию экономического факультета Кубанского ГАУ (г. Краснодар, 14-15 мая 2020 г.) / сост. А. И. Трубилин, К. Э. Тюпаков, А. А. Адаменко. – Краснодар: КубГАУ, 2020. – 467 с.
6. Ա. Ոսկանյան, Կ. Մնացականյան, Մ. Ղազարյան/ Կլաստերիզացիան որպես ՀՀ պտուղ բանջարեղենի արժեշտային կատարելագործման միջոց// Ներկայացվել է տպագրության «Հայկական տնտեսագիտական հանդես» ամսագրին:
7. Ա. Ոսկանյան, Մ. Հովհաննիսյան// ՀՀ Շիրակի մարզում հացահատիկային կլաստերի ձևավորումը որպես պարենային անվտանգության ապահովման միջոց// Ներկայացվել է տպագրության ՀԱԱՀ «Ագրոգիտություն և տեխնոլոգիա» գիտական պարբերականին:
8. Ա. Ոսկանյան, Մ. Ղազարյան/ ՀՀ Տավուշի մարզում հացահատիկային տնտեսության զարգացումը կլաստերային մոտեցումների կիրառմամբ/

Ձեկուցումներ գիտաժողովներում

1. Казарян Э. С., Восканян А. Е., Оганесян М. Э.// Кластерная политика - как инструмент повышения конкурентоспособности аграрного сектора республики Армения// Инновационное развитие АПК: экономические проблемы и перспективы: материалы XV междунар. науч.-практич. конф. посвященной 60-летию экономического факультета Кубанского ГАУ (г. Краснодар, 14-15 мая 2020 г.)

II. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԸ

III. ՁԵՌՔԵՐՎԱԾ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

IV. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

h/h	ազգանուն	անուն	հայրանուն	ծննդան թիվ	անձնագրի սերիա, համար	գիտական աստիճան	պաշտոն	Հրամանագրման ամսաթիվ	ամսական աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Ոսկանյան	Աշոտ	Երջանիկի	1953	AM 0221055	տ.գ.թ. դոցենտ	Տնօրեն	01.02.2020	
2	Հախնազարյան	Տիգրան	Հովսեփի	1980	AT 0406965	-	Առաջ. գիտ. աշխ.	03.08.2020	
3	Մնացականյան	Կարինե	Պետրոսի	1984	008544507 1	տ.գ.թ. դասախոս	Ավագ. գիտ. աշխ.	01.02.2020	
4	Հովհաննիսյան	Մարիաննա	Էդուարդի	1985	008706350	տ.գ.թ. դասախոս	Ավագ. գիտ. աշխ.	01.02.2020	
5	Աբրահամյան	Սյուզաննա	Վարդգեսի	1980	AM 0782486	տ.գ.թ.	Կրտ. գիտ. աշխ.	01.02.2020	
6	Ղազարյան	Մարգո	Վարդանի	1988	AT 0527282	-	Կրտ. գիտ. աշխ.	01.02.2020	

Կազմակերպության
ղեկավար՝

_____ (ստորագրություն)

_____ (Ա.Ա.Հ.)

Կազմակերպության
անձնակազմի կառավարման
բաժնի պետ՝

_____ (ստորագրություն)

_____ (Ա.Ա.Հ.)

«__» _____ 20... թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« _____ » _____ 20.. թ.

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանի և _____ (կազմակերպության անվանումը) _____-ը, ի դեմս տնօրեն/ռեկտոր _____ (անուն, ազգանուն) _____-ի, հանդիսանալով « _____ » _____ 20..թ. կնքված **գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման** ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին N _____ պայմանագրի Կողմեր, կազմեցին սույն արձանագրությունն այն մասին, որ Կողմերն ամբողջությամբ իրականացրել են պայմանագրով իրենց վրա դրված պարտավորությունները:

ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
<p align="center">_____</p> <p align="center"><i>(կազմակերպության անվանումը)</i></p> <p>Տնօրեն/ռեկտոր՝ _____</p> <p align="center"><i>(ստորագրություն)</i></p> <p align="center">_____</p> <p align="center"><i>(անուն, ազգանուն)</i></p>	<p>Աշխատակազմի ղեկավար՝ _____</p> <p align="right"><i>(ստորագրություն)</i></p> <p align="center">ԼԵՎՈՆ ՄԱՐԴՈՅԱՆ</p>

Կ.Տ.

Կ.Տ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« _____ » _____ 20.. թ.

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանի և _____ (կազմակերպության անվանումը) _____-ը, ի դեմս տնօրեն/ռեկտոր _____ (անուն, ազգանուն) _____-ի, հանդիսանալով « _____ » _____ 20..թ. կնքված **գիտական և գիտատեխնիկական գործունեության ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին** N _____ պայմանագրի Կողմեր, կազմեցին սույն արձանագրությունն այն մասին, որ Կողմերն ամբողջությամբ իրականացրել են պայմանագրով իրենց վրա դրված պարտավորությունները:

ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
<p align="center">_____</p> <p align="center"><i>(կազմակերպության անվանումը)</i></p> <p>Տնօրեն/ռեկտոր՝ _____</p> <p align="center"><i>(ստորագրություն)</i></p> <p align="center">_____</p> <p align="center"><i>(անուն, ազգանուն)</i></p>	<p align="center">Աշխատակազմի ղեկավար՝ _____</p> <p align="center"><i>(ստորագրություն)</i></p> <p align="center">ԼԵՎՈՆ ՄԱՐԴՈՅԱՆ</p>

Կ.Տ.

Կ.Տ.